«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2-01/129

ք. Մեծամոր «____» _____ 2022թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ**-ն, որը գործում է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **8777817.60 (ութ միլիոն յոթ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր տասնյոթ և 60/100)** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է Գնորդի կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) 30 օրացուցային օրվա ընթացքում (ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը):

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ **«ՀԱԷԿ» ՓԲԸ**	**ՎԱՃԱՌՈՂ** **«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ, **Հ/Հ** 1930000199200100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան, **ՀՎՀՀ** 04401874, **Հեռ./ֆաքս**՝ 28-18-80, 28-06-69, **Հեռ.**՝ 20-04-91, 33-40 **E-mail**: anpp@anpp.am	ք. Երևան, Շենգավիթ, Չեխովի փ. շ. 50, բն. 16 **Հ/Հ** 11817068734700, «ԱյԴի Բանկ» ՓԲԸ, **ՀՎՀՀ** 35197258, **Հեռ.**՝ 077 224 232 **E-mail**: gayanehakobyan52@gmail.com
Digitally signed by MARTIROSYAN EDUARD 3214740172 Date: 2022.04.20 16:59:41 AMT	
..... **Է. Մարտիրոսյան** Կ.Տ.	..... **Գ. Հակոբյան** Կ.Տ.
	Digitally signed by HAKOBYAN GAYANE 5905860416 Date: 2022.04.18 11:07:26 AMT

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի			
չ/ h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	ամբողջական անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	*18231910/2*	*Կոստյում*	*Կանացի բանվորական: Պաշտպանիչ հատկությունը Զ, Մի: Կազմությունը՝ պոլիէսթեր - 65±10%, վիսկոզ -35±10%, խտությունը 160±10գ/մ², ԳՕՍՏ 12.4.280-2014, ՏՌ ՏՍ 019/2011: Գույնը մուգ կանաչ: Բաճկոնը՝ օձիքը երկլանջ ծալվող: Օձիքի վրա կա պիտակ չափսի մասին նշումով: Թևերը ¾, արմունկի հատվածում 3սմ լայնության մանժետ: Մանժետի եզրային կարի վրա սպիտակ նեղ երիզ, նույնը օձիքի և կողային գրպանների վրա: Կոճկվում է 5 կոճակով, կոճկելուց հետո կոճակները երևում են: Ունի շեղ կողային գրպաններ գոտկատեղի հատվածում: Գրպանների չափսը 15x15սմ, ունի 3սմ լայնության մանժետ: Կոստյումի մեջքի մասում, գոտկատեղի հատվածում ներկարված է էլաստիկ ժապավեն: Բոլոր կարերը օվերլոկված են: Կոստյում մեջքի մասում մուգ դեղնագույն թելով ասեղնագործած է «ՀԱԷԿ» հապավումը՝ տառերի բարձրությունը 70մմ, լայնությունը 50մմ: Տաբատը՝ ուղիղ ձևվածքի, դասական: Գոտին 4 սմ լայնությամբ, էլաստիկ ժապավենով: Կողային ներքին գրպաններով, շեղակի կտրվածքով: Բոլոր կարերը երկկար են և օվերլոկված: Տաբատի ներսի կարերից մեկի վրա կա պիտակ չափսի մասին նշումով: Տաբատի ներսի եզրերը կարված են երկծալված փակ կարով: Համաձայն նախանմուշի (մակետ):* *ՀԱՍԱԿԸ – Չափսը – Քանակը – Չափման միավորը* *158;164 – 40 – 3 – Լրակազմ* *158;164 – 42 – 5 – Լրակազմ* *158;164 – 44 – 4 – Լրակազմ* *158;164 – 50 – 11 – Լրակազմ* *158;164 – 52 – 2 – Լրակազմ* *158;164 – 54 – 4 – Լրակազմ* *158;164 – 56 – 10 – Լրակազմ* *158;164 – 58 – 2 – Լրակազմ* *158;164 – 60 – 13 – Լրակազմ* *158;164 – 64 – 2 – Լրակազմ* *158;164 – 66 – 1 – Լրակազմ* *170;176 – 46 – 8 – Լրակազմ* *170;176 – 48 – 7 – Լրակազմ* *170;176 – 50 – 4 – Լրակազմ* *170;176 – 54 – 1 – Լրակազմ* *170;176 – 58 – 1 – Լրակազմ*
4	*18811230/1*	*Կոշիկ*	*Կիսաճտքավոր, բանվորական, գույնը՝ սև, սոսնձված պոլիուրեթանային անտիստատիկ ներբանով: Վերին մասը՝ արհեստական կաշվից, փոսիկներով (չծակված), անջրանցիկ ծածկույթով (юфть), լեզվակը՝ արհեստական կաշվից: Ներբանի կցման եղանակը՝ սոսինձ, միջատակը՝ շարժական (ЭВА/текстиль): Քթամասը՝ մետաղական մինչև 200 ջոուլ ուժից*

<table>
<tr><td></td><td></td><td></td><td>պաշտպանվելու համար; (подносок Металлический (200Дж)): Կոշկաքուղերով (шнурки): քաշը՝ 0.9÷1.3 կգ, ԳOUS 12.4.137-84 TP TC 019/2011
<table>
<tr><th>Չափը</th><th>Քանակը</th><th>Չափման միավորը</th></tr>
<tr><td>35</td><td>1</td><td>զույգ</td></tr>
<tr><td>38</td><td>1</td><td>զույգ</td></tr>
<tr><td>39</td><td>15</td><td>զույգ</td></tr>
<tr><td>40</td><td>30</td><td>զույգ</td></tr>
<tr><td>41</td><td>108</td><td>զույգ</td></tr>
<tr><td>42</td><td>165</td><td>զույգ</td></tr>
<tr><td>43</td><td>137</td><td>զույգ</td></tr>
<tr><td>44</td><td>46</td><td>զույգ</td></tr>
<tr><td>45</td><td>20</td><td>զույգ</td></tr>
<tr><td>46</td><td>4</td><td>զույգ</td></tr>
<tr><td>47</td><td>1</td><td>զույգ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>5</td><td>18421130/1</td><td>Ձեռնոց-կրագի</td><td>«Սիբերիա» արտիկուլ՝ A0210, ԳOUS 12.4.252-2013, ՏՌ SU 019/2011, երկարությունը՝ 350 մմ, արտադրող՝ Չինաստան, նյութը՝ նրբակաշի ԿՌՍ</td></tr>
<tr><td>6</td><td>18111300/1</td><td>Կոստյում ամառային</td><td>Բաղկացած է բաճկոնից և տաբատից, 50(±5)% բամբակ, 50(±5)% պոլիէսթեր, խտությունը 224(±10)գր/մ^2 (կտորը ripstop տեսակի), գույնը՝ մուգ մոխրագույն: Բաճկոնը ռեզինե գոտիով, ծալովի օձիգով: Կոճկվում է շղթայով, որը երեսապատված է կտորով: Ներքևի մասում երկկողմանի ներկարված թեք գրպաններ են, առանց կափույրի, շղթայով: Համազգեստի մեջքի մասում ասեղնագործվում է SECURITY բառը դեղին գույնով, տառերի բարձրությունը 35մմ, լայնությունը 25մմ, բառի ընդհանուր երկարությունը 250մմ: Տաբատը՝ ազատթող փողքերով 2 կողային ներկարված գրպանով, հետևի մասում 2 գրպան կափույրով: Տաբատը կոճկվի շղթայով և վերևի մասում մեկ կոճակով:
<table>
<tr><th>Չափը</th><th>Քանակը</th><th>Չափման միավորը</th></tr>
<tr><td>48</td><td>12</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>50</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>52</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>54</td><td>13</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>56</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>58</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>60</td><td>2</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>62</td><td>1</td><td>Լրակազմ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>9</td><td>18421170/1</td><td>Գոտի</td><td>Կաշվե գոտի 50մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով, գոտու երկարությունը 120÷150սմ:</td></tr>
<tr><td>11</td><td>18111300/2</td><td>Կոստյում ամառային</td><td>Ամառային, բաղկացած է բաճկոնից և տաբատից, 50%(+/-2%), բամբակ, 50%(+/-2%) պոլիեսթեր, խտությունը 224 գրամ/մ^2, կտորը (ripstop տեսակի), մուգ թանաքագույն, ռեզինե գոտիով, ծալովի օձիքով: Կոճկվում է շղթայով, որը երեսապատված է կտորով: Ներքևի մասում երկկողմանի ներկարված թեք գրպաններ են, առանց կափույրի, շղթայով, առջևի մասում ձախ կողմում տպվում է “ՀԱԷԿ” հապավումը, տառերի բարձրությունը՝ 20մմ, լայնությունը 10մմ: Տաբատը ազատթող փողքերով 2 կողային ներկարված գրպանով, հետևի մասում 2 գրպան կափույրով: Առաջնամասը կոճկվում է շղթայով:
<table>
<tr><th>Չափը</th><th>Քանակը</th><th>Չափման միավորը</th></tr>
<tr><td>44</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>46</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>48</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>50</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
</table></td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td></td><td></td><td>
<table>
<tr><td>52</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>54</td><td>14</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>56</td><td>14</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>58</td><td>8</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>60</td><td>3</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>62</td><td>2</td><td>Լրակազմ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>12</td><td>18441100/1</td><td>Ամառային գլխարկ</td><td>Ամառային գլխարկ /կեպի/ Մուգ թանաքագույն 35%) (+/-2%) բամբակ, 65%) (+/-2%) պոլիէսթեր, խտությունը 210 գրամ/մ² ՏՈՒ 17-08-635-93
<table>
<tr><td>Չափսը</td><td>Քանակը</td><td>Չափման միավորը</td></tr>
<tr><td>48</td><td>10</td><td>հատ</td></tr>
<tr><td>50</td><td>20</td><td>հատ</td></tr>
<tr><td>52</td><td>20</td><td>հատ</td></tr>
<tr><td>54</td><td>20</td><td>հատ</td></tr>
<tr><td>56</td><td>5</td><td>հատ</td></tr>
<tr><td>58</td><td>5</td><td>հատ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>14</td><td>18421170/2</td><td>Գուտի</td><td>80% (+/-2%) պոլիէսթեր, երկարությունը՝ 150սմ, լայնությունը՝ 5սմ գույնը՝ մուգ կապույտ կամ սև, մետաղյա ճարմանդով</td></tr>
<tr><td>15</td><td>18421130/2</td><td>Ձեռնոց բրդյա</td><td>Հնգամատ, գույնը- սև, խիտ բրդյա գործվածքից: 85% (+/-2%) բուրդ, 15% (+/-2%) պոլիեսթեր:
<table>
<tr><td>Չափսը</td><td>Քանակը</td><td>Չափման միավորը</td></tr>
<tr><td>M</td><td>40</td><td>զույգ</td></tr>
<tr><td>S</td><td>40</td><td>զույգ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>16</td><td>18231600/1</td><td>Ձմեռային վերնաշապիկ(սվիտր)</td><td>Մուգ թանաքագույն երկարաթև, բրդյա, ուսերը պատված են սև կտորով: Ձախ կրծքավանդակին շերտակարով վրադիր, կափույրով գրպան: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով: Վերնաշապիկի առջևի մասում ձախ կողմում գրպանի վերին մասում տպվում է “ՀԱԷԿ” հապավումը, Տառերի բարձրությունը 20մմ, լայնությունը -10մմ:
<table>
<tr><td>Չափսը</td><td>Քանակը</td><td>Չափման միավորը</td></tr>
<tr><td>44</td><td>5</td><td>հատ</td></tr>
<tr><td>46</td><td>5</td><td>հատ</td></tr>
<tr><td>48</td><td>10</td><td>հատ</td></tr>
<tr><td>50</td><td>15</td><td>հատ</td></tr>
<tr><td>52</td><td>12</td><td>հատ</td></tr>
<tr><td>54</td><td>12</td><td>հատ</td></tr>
<tr><td>56</td><td>7</td><td>հատ</td></tr>
<tr><td>58</td><td>5</td><td>հատ</td></tr>
<tr><td>60</td><td>5</td><td>հատ</td></tr>
<tr><td>62</td><td>4</td><td>հատ</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>17</td><td>18441100/2</td><td>Գլխարկ ձմեռային</td><td>Արտադրվում է 126+/-5գրամ/մ² մակերեսային խտությամբ ակրիլե գործվածքից, գույնը՝ մուգ թանաքագույն (կապույտ): Գլխարկի դիմային հատվածը՝ ծալված: Գլխարկը ներսի կողմից ունի ստուգիչ պիտակ՝ վրան նշված չափսը և արտադրողի անվանումը:
<table>
<tr><td>Չափսը</td><td>Քանակը</td><td>Չափման միավորը</td></tr>
<tr><td>48</td><td>10</td><td>հատ</td></tr>
</table>
</td></tr>
</table>

			50	20	հատ	
			52	20	հատ	
			54	20	հատ	
			56	5	հատ	
			58	5	հատ	

Լրացուցիչ պայմաններ՝

- *Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Փաթեթավորումը գործարանային, կտորները լվանալուց չպետք է գունաթափվեն և փոքրանան, չափերը համապատասխանեն հանդերձանքի չափերի ռուսական աղյուսակի պարամետրերին:*
- *Մատակարարված ապրանքները անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով պետք է անցնեն փորձաքննություն անկախ փորձագետի կողմից մատակարարի միջոցներով, և փորձաքննության եզրակացությունը մատակարարը պետք է ներկայացնի Պատվիրատու կողմին:*
- *Խմբաքանակի արտադրությունը սկսել կարված ձևը և գույները ՀԱԷԿ-ի հետ համաձայնեցնելուց հետո:*
- *Ապրանքները պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր:*

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Digitally signed by MARTIROSYAN EDUARD 3214740172
Date: 2022.04.20 17:00:11 AMT

..... **Է. Մարտիրոսյան**
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ

..... **Գ. Հակոբյան**
Կ.Տ.

Digitally signed by HAKOBYAN GAYANE 5905860416
Date: 2022.04.18 11:08:37 AMT

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
ՀՀ/հ	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
3	*լրակազմ*	*9900*	***772200***	*78*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*78*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
4	*զույգ*	*6811.2*	***3596313.6***	*528*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*528*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
5	*զույգ*	*2970*	***403920***	*136*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*136*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
6	*լրակազմ*	*13980*	***782880***	*56*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*56*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
9	*հատ*	*3390*	***189840***	*56*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*56*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
11	*լրակազմ*	*13980*	***1118400***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
12	*հատ*	*1980*	***158400***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
14	*հատ*	*4950*	***396000***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
15	*զույգ*	*1673.1*	***133848***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
16	*հատ*	*11800.8*	***944064***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*
17	*հատ*	*3524.4*	***281952***	*80*	*ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ*	*80*	*պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 50 օրացուցային օրվա ընթացքում*

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Digitally signed by MARTIROSYAN EDUARD 3214740172
Date: 2022.04.20 17:00:37 AMT

..... **Է. Մարտիրոսյան**
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ

..... **Գ. Հակոբյան**
Կ.Տ.

Digitally signed by HAKOBYAN GAYANE 5905860416
Date: 2022.04.18 11:09:31 AMT

Հավելված N 3
« » 2022թ. կնքված
***№ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-55/22-2-01/129** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի																
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	
3	*18231910/2*	*Կոստյում*					***772200***	*772200*	*772200*	*772200*	*772200*	*772200*	*772200*	*772200*	***772200***	
4	*18811230/1*	*Կոշիկ*					***3596313.6***	*3596313.6*	*3596313.6*	*3596313.6*	*3596313.6*	*3596313.6*	*3596313.6*	*3596313.6*	***3596313.6***	
5	*18421130/1*	*Ձեռնոց-կրագի*					***403920***	*403920*	*403920*	*403920*	*403920*	*403920*	*403920*	*403920*	***403920***	
6	*18111300/1*	*Կոստյում ամառային*					***782880***	*782880*	*782880*	*782880*	*782880*	*782880*	*782880*	*782880*	***782880***	
9	*18421170/1*	*Գոտի*					***189840***	*189840*	*189840*	*189840*	*189840*	*189840*	*189840*	*189840*	***189840***	
11	*18111300/2*	*Կոստյում ամառային*					***1118400***	*1118400*	*1118400*	*1118400*	*1118400*	*1118400*	*1118400*	*1118400*	***1118400***	
12	*18441100/1*	*Ամառային գլխարկ*					***158400***	*158400*	*158400*	*158400*	*158400*	*158400*	*158400*	*158400*	***158400***	
14	*18421170/2*	*Գոտի*					***396000***	*396000*	*396000*	*396000*	*396000*	*396000*	*396000*	*396000*	***396000***	
15	*18421130/2*	*Ձեռնոց բրդյա*					***133848***	*133848*	*133848*	*133848*	*133848*	*133848*	*133848*	*133848*	***133848***	
16	*18231600/1*	*Ձմեռային վերնաշապիկ(սվիտր)*					***944064***	*944064*	*944064*	*944064*	*944064*	*944064*	*944064*	*944064*	***944064***	
17	*18441100/2*	*Գլխարկ ձմեռային*					***281952***	*281952*	*281952*	*281952*	*281952*	*281952*	*281952*	*281952*	***281952***	

****Վճարումը կկատարվի փաստացի մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատակարարման դեպքում) 30 օրացուցային օրվա ընթացքում:***

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Digitally signed by MARTIROSYAN EDUARD 3214740172
Date: 2022.04.20 17:01:02 AMT

..... **Է. Մարտիրոսյան**
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Գայանե Հակոբյան Գևորգի» ԱՁ

..... **Գ. Հակոբյան**
Կ.Տ.

Digitally signed by HAKOBYAN GAYANE 5905860416
Date: 2022.04.18 11:10:25 AMT

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն